Արձանագրություն N 3

ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի կողմից տնտեսական և սանիտարահիգիենիկ ապրանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-22/3 ծածկագրով գնման ընթացակարգի /այսուհետ նաև՝ Ընթացակարգ/ գնահատող հանձնաժողովի արտահերթ նիստի

ք. Երևան, Բաղրամյան 19

01.02.2022թ.
ժամը՝ 17:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Վ.Թորոսյան

Հանձնաժողովի անդամներ՝ Վ.Մամբրեյան, Ա.Խուդինյան, Ա.Լալայան, Վ.Քեռյան
(նիստից բացակայում է Անժելա Լալայանը և Վազգեն Քեռյանը)

Հանձնաժողովի քարտուղար՝ Հ.Սաղաթելյան

1. Տեղեկավություն՝ «ՖՈՒԴՍԻԹԻ» ՍՊԸ-ի և «Սոֆթ Թրեյդ» ՍՊԸ-ի կողմից պայմանագրերը չստորագրելու, որակավորման և պայմանագրի ապահովումները չներկայացնելու և ընթացակարգը չկայացած հայտարարելու վերաբերյալ

ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի կողմից տնտեսական և սանիտարահիգիենիկ ապրանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-22/3 ծածկագրով գնման ընթացակարգի /այսուհետ նաև՝ Ընթացակարգ/ գնահատող հանձնաժողովի 2-րդ արձանագրության 10-րդ կետի որոշման համաձայն՝ ի թիվս այլ ընտրված մասնակիցների, «Սոֆթ Թրեյդ» ՍՊԸ-ն Ընթացակարգի 4-րդ և 9-րդ չափաբաժիններով և «ՖՈՒԴՍԻԹԻ» ՍՊԸ-ն՝ Ընթացակարգի 1-ին, 3-րդ և 6-րդ չափաբաժիններով հայտարարվել են ընտրված մասնակիցներ: 2022թ. փետրվարի 14-ին eauction.armeps.am համակարգի միջոցով /այսուհետ՝ Համակարգ/ վերոնշյալ ընտրված մասնակիցներին են ներկայացվել պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը:

«Գնումների մասին» օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասով, ինչպես նաև ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-22/3 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 9.3 կետով սահմանված ժամկետում՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում որակավորման և պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Գնահատող հանձնաժողովն արձանագրեց, որ սահմանված ժամկետում վերոնշյալ մասնակիցները չեն ստորագրել պայմանագրերը և պատվիրատուին չեն ներկայացրել որակավորման և պայմանագրերի ապահովումները:

Վերոգրյալով պայմանավորված գնահատող հանձնաժողովը որոշեց՝

1. Հիմք ընդունելով Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասը՝ «ՖՈՒԴՍԻԹԻ» ՍՊԸ-ին և «Սոֆթ Թրեյդ» ՍՊԸ-ին զրկել պայմանագիրը ստորագրելու իրավունքից:
2. Ընթացակարգի 1-ին, 3-րդ, 4-րդ, 6-րդ և 9-րդ, չափաբաժինները համաձայն Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հայտարարել չկայացած:
3. Հաստատել ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-22/3 ծածկագրով Ընթացակարգը՝ 1-ին, 3-րդ, 4-րդ, 6-րդ և 9-րդ, չափաբաժինները չկայացած հայտարարելու մասին հայտարարության տեքստը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Վարդան Թորոսյան

անդամներ՝ _____ Վաչե Մամբրեյան

_____ Ավետիք Խուդինյան

Քարտուղար՝ _____ Հերմինե Սաղաթելյան